ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/175

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.10.2019թ. թիվ 26/26-1/17409-2019 գրությամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 17.10.2019թ. թիվ ԱՎ/01/08/508-19 գրության հիման վրա, 24.10.2019թ. թիվ 26/26-1/17409-2019 գրությամբ նախաձեռնել է «Էկոֆորմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էկոֆորմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էկոֆորմ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-51» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելիս «Էկոֆորմ» ՍՊԸ-ն արդեն գտնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այդ իսկ պատճառով մատակարարումը չի իրականացվել: 14-րդ չափաբաժնի մասով պատվիրատուն հրաժարվել է ընդունել մատակարարվելիք ապրանքը, պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում հրավերում նշված տեխնիկական բնութագրին, սակայն հրավերում պատվիրատուն նշել է հեղուկ մաքրող միջոց և Ընկերության կողմից գնային առաջարկն արվել է հեղուկ մաքրող միջոցի համար, որը համապատասխանում էր տեխնիկական բնութագրի բոլոր պահանջներին:

«Էկոֆորմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/175 ընթացակարգի շրջանակներում 29.10.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.10.2019թ. թիվ ԱՎ/01/08/508-19 գրությամբ հայտնել է, որ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-51» ծածկագրով ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) ընտրված մասնակից, սակայն վերջինիս կողմից NN 4, 14 և 15-րդ չափաբաժինների համար ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատվել են Ընթացակարգի հրավերի պայմաններին ոչ համարժեք:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/175 ընթացակարգի շրջանակներում 29.10.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 21.08.2019թ. հայտ է ներկայացրել «Էկոֆորմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.10.2019թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

4. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 05.08.2019թ. թիվ ՍՑ-ՆԳ-2019/118 որոշմամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.10.2019թ. թիվ 26/26-1/17409-2019

գրությունը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 17.10.2019թ. թիվ ԱՎ/01/08/508-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ

մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **21.08.2019թ.** հայտ է ներկայացրել «Էկոֆորմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.10.2019թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի **05.08.2019թ. թիվ ՍՑ-ՆԳ-2019/118 որոշմամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացրել է **21.08.2019թ.**, մինչդեռ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ՍՑ-ՆԳ-2019/118 որոշման համաձայն **08.08.2019** թվականից (որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից) արդեն իսկ ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-51» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ 21.08.2019թ. դրությամբ Ընկերությունը չի ունեցել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են «Էկոֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.10.2019թ. թիվ 26/26-1/17409-2019 գրությամբ «Էկոֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էկոֆորմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**